ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/72-Պ

ք. Երևան 11 նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Հայր և որդի Երեմյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գլխավոր տնօրեն Դավիթ Երեմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

Հիմք ընդունելով Կատարողի և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Համալիր) միջև 2022 թվականի նոյեմբերի 03-ին ստորագրված համագործակցության պայմանագրի պայմանները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կայանալիք «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի նախապատրաստական աշխատանքների, ինչպես նաև բուն մրցույթի անցկացման ընթացքում Համալիրում գտնվող՝ Ընկերության կողմից նշված անձանց սննդի ապահովման անհրաժեշտությունը, ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Ընկերությանը մատուցել հանրային սննդի կազմակերպման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ)՝ համաձայն սույն Պայմանագրով, ինչպես նաև Հավելվածներով սահմանված բնութագրի:

1.2. Ծառայությունները մատուցելիս կիրառելի ճաշատեսակները սահմանվում են սույն Պայմանագրի Հավելված 2-ով: Կատարողը սույն Պայմանագրի շրջանակներում իրականացնում է Ընկերության կողմից նշված անձանց համար Հավելված 2-ի Ցանկ №3-ով նախատեսված ըմպելիքների և աղանդերի տրամադրում՝ պայմանագրով նախատեսված արժեքի սահմաններում, առանց քանակի սահմանափակման:

1.3. Կատարողը Հավելված 2-ում չներառված ճաշատեսակների, ուտեստների, ըմպելիքների և քաղցրավենիքների չափաքանակները, որոնք կառաջացնեն Պայմանագրով սահմանված արժեքների ավելացման, պետք է նախապես համաձայնեցնի Ընկերության պատասխանատու աշխատակցի հետ:

1.4. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

1.5. Կողմերն արձանագրում են, որ Ծառայությունների մատուցման հիմնական վայրը Համալիրի նախասրահի աջակողմյան հատվածի հանրային սննդի համար նախատեսված տարածքն է (193.2 քմ ընդհանուր մակերեսով), ինչպես նաև Կողմերի համաձայնությամբ նախատեսված՝ Համալիրի տարածքում գտնվող այլ տարածքում, որը հատուկ նախատեսված կլինի պատվիրակությունների անդամների համար, և, ըստ անհրաժեշտության, Ընկերության կողմից նշված անձանց համար (այսուհետ նաև՝ Ճաշարան):

1.6. Կողմերն արձանագրում են, որ Ծառայությունները մատուցվում են և հանրային սննդի ապահովումն իրականացվում է մեկ օրվա կտրվածքով առավելագույնը 1070 (մեկ հազար յոթանասուն) անձի համար (նշված անձանց ցանկի նախնական բացվածքը տե՛ս Հավելված 1-ում): Յուրաքանչյուր օրվա համար սննդից

օգտվող անձանց քանակի վերաբերյալ հստակ տեղեկատվությունը Ընկերությունը ներկայացնում է Կատարողին առնվազն երկու օր առաջ: Ընդ որում, նշված ժամկետից հետո Ընկերության կողմից նախապես տրամադրված քանակը կարող է փոփոխվել՝ ավելանալ և/կամ նվազել ոչ ավել, քան 10%-ի չափով, առանց Ընկերության նկատմամբ որևէ տույժի կիրառմամբ:

1.7. Կատարողի կողմից սնունդը տրամադրվում է բացառապես կտրոնները (այսուհետ՝ Կտրոն(ներ)) տիրապետող անձանց՝ դրանց ներկայացման պարագայում, որում նշված կլինի՝ «Մանկական Եվրատեսիլ 2022» մրցույթի կարգախոսը՝ Spin the Magic», Ընկերության կնիքը, տվյալ օրվա ամսաթիվը, ինչպես նաև նշում Հավելված 2-ում ներառված ճաշատեսակների վերաբերյալ: Կատարողը պարտավորվում է ապահովել տվյալ Կտրոնների պահպանությունը, հետագայում Ընկերության պատասխանատու աշխատակցի հետ համապատասխան փոխհաշվարկներ իրականացնելու համար:

1.8. Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրով նախատեսված պայմանները կիրառվում են Կողմերի միջև մինչև Պայմանագրի ստորագրումը՝ 2022 թվականի նոյեմբերի 06-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ: Ծառայությունները մատուցվում են 2022 թվականի նոյեմբերի 06-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***Ընկերությունն իրավունք ունի՝***

2.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետում,

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը: Սույն կետով սահմանված ստուգմանն Ընկերության ցանկությամբ կարող են ներգրավվել իրավասու մարմինները՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին և այլն,

2.1.3. Պահանջել Կատարողից աջակցել Ընկերությանը Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի, մատուցված Ծառայությունների արդյունքի վերաբերյալ Ընկերությանը հետաքրքրող տեղեկատվությունը, բացառությամբ գաղտնիք հանդիսացող տեղեկատվության,

2.1.4. Սույն Պայմանագրով սահմանված բնութագրին չհամապատասխանող ծառայություններ մատուցելու դեպքում՝

2.1.4.1. Սահմանել ողջամիտ ժամկետ Պայմանագրով սահմանված Ծառայություններում հայտնաբերված թերությունները վերացնելու համար,

2.1.4.2. Սույն Պայմանագրով սահմանված կարգով միակողմանի լուծել Պայմանագիրը:

2.2. ***Ընկերությունը պարտավոր է՝***

2.2.1. Կատարողին ապահովել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվությամբ: Մասնավորապես, նշանակել սույն Պայմանագրի կատարման համար պատասխանատու անձի, ով կտրամադրի Կատարողին անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում նաև յուրաքանչյուր օրվա կտրվածքով Ծառայություններից օգտվող անձանց քանակի վերաբերյալ տրամադրել Կատարողին համապատասխան տեղեկատվություն առնվազն երկու օր առաջ:

2.2.2. Կատարողի անձնակազմի համար ապահովել անխափան մուտք ու ելք Ընկերության հետ նախապես համաձայնեցված սննդի մատուցման հատվածներում:

2.3. ***Կատարողն իրավունք ունի՝***

2.3.1. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման նպատակով Ընկերությունից պահանջել ապահովել սույն Պայմանագրի 2.2.1. կետով սահմանված պայմանները:

2.4. ***Կատարողը պարտավոր է՝***

2.4.1. Ծառայությունները մատուցել սույն Պայմանագրով սահմանված բնութագրի և գնացուցակին համապատասխան, ամբողջությամբ և պատշաճ որակով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջներին համապատասխան, ներառյալ՝ սննդի անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխան,

2.4.2. Ծառայությունների մատուցման ողջ ընթացքում ապահովել համապատասխան թվով աթոռ, սեղան, սկուտեղ, անհրաժեշտ սպասք (ափսե, դանակ, պատառաքաղ, գդալ, բաժակ, բացիչ և այլն),

2.4.3. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավվելը հնարավոր է միայն Ընկերության նախնական գրավոր համաձայնությամբ,

2.4.4. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Ընկերության տված սույն Պայմանագրի կատարմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներին,

2.4.5. Սույն Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսվելու դեպքում այդ մասին գրավոր ձևով հայտնել Ընկերությանը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել 100 000 000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամը՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.1.1. Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարի չափով Ծառայություններ մատուցելուց հետո տեղեկացնել Ընկերությանը Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափի սպառման վերաբերյալ և սույն Պայմանագրի շրջանակներում չմատուցել Ծառայություններ մինչև Կողմերի միջև գրավոր համաձայնության ձեռքբերումը: Սույն կետով սահմանված ընդհանուր կանոնը կիրառելի է նաև այն դեպքի նկատմամբ, երբ Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափը դեռևս սպառված չէ, սակայն Ծառայությունների հերթական մատուցումը կհանգեցնի սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված գնային սահմանաչափի անցման:

3.1.2. Կողմերն արձանագրում են, որ Ծառայությունների մատուցման ավարտից հետո Կատարողի կողմից փաստացի մատուցված Ծառայությունների ծավալը և արժեքը հաշվարկվում է Պայմանագրի 1.6. կետով նախատեսված՝ Ընկերության կողմից Կատարողին տրամադրված անձանց քանակին, ինչպես նաև Կատարողի մոտ գտնվող Կտրոնների թվին համապատասխան: Հավելված 2-ի Ցանկ №1-ով նախատեսված ճաշացանկից օգտվելու համար նախատեսված յուրաքանչյուր Կտրոն պարունակում է «LUNCHBOX» նշումը, որի արժեքն է 2 500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, իսկ Ցանկ №2-ով նախատեսված ճաշացանկից օգտվելու համար նախատեսված յուրաքանչյուր Կտրոն պարունակում է «BUFFET» նշումը, որի արժեքն է 5 000 (հինգ հազար) ՀՀ դրամ: Ծառայությունների փաստացի արժեքը հաշվարկելիս յուրաքանչյուր օրվա համար տվյալ օրվա անձանց քանակին համապատասխան հաշվարկվում է 800 ՀՀ դրամ, որպես Հավելված 2-ի Ցանկ №3-ով նախատեսված ըմպելիքների և աղանդերի՝ Կատարողի կողմից առանց քանակի սահմանափակման տրամադրման դիմաց արժեք:

3.2. Սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված գումարը Ընկերությունը վճարում է Կատարողի բանկային հաշվեհամարին անկանխիկ փոխանցմամբ հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 5 (հինգ) աշխատանքային օրերի ընթացքում:

3.3. Վճարման ամսաթիվ է համարվում Ընկերության բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Ընկերության բանկում կատարում է Ընկերությունը, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Ծառայությունների հանձնում-ընդունումը իրականացվում է հետևյալ կարգով.

4.1.1. Ծառայությունների մատուցման ավարտից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Ընկերությանն է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը, արձանագրություն/հաշվետվություն՝ որում կնշվի 06.11.2022թ.-20.12.2022թ.-ը ներառյալ յուրաքանչյուր օրվա ընթացքում ծառայություններից օգտվող անձանց քանակը, ինչպես նաև Կատարողի մոտ գտնվող Կտրոնները:

4.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը, Կատարողի կողմից ներկայացված արձանագրություն/հաշվետվությունը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

4.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Ընկերությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը ու չի հաստատում հաշիվ-վավերագիրը և սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 2.1.5 կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

4.4. Այն դեպքում, եթե Ընկերությունը սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Ընկերությանը ներկայացնելու օրը և սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետին հաջորդող առաջին իսկ աշխատանքային օրը Պատվիրատուն պարտավորվում է հաստատել Կատարողի կողմից ներկայացված հաշիվ-վավերագիրը և Պայմանագրով սահմանված ժամկետում վճարել դրանով նախատեսված գումարը:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ

5.1. Սույն Պայմանագիրը Կողմերի՝ գրավոր ձևով ձևակերպված համաձայնությամբ կարող է լուծվել ցանկացած ժամանակ:

5.2. Ընկերությունը իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին 10 (տաս) օրացուցային օր առաջ ծանուցելով Կատարողին, եթե

5.2.1. Կատարողը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում չի վերացրել Ծառայություններում հայտնաբերված թերությունները,

5.2.2. Կատարողը բազմիցս խախտել է սույն Պայմանագրով սահմանված բնութագրով ծառայությունների մատուցումը՝ անկախ թերությունները փաստացի ուղղած լինելու փաստից,

5.2.3. Սննդի անվտանգության բնագավառի պետական կամ այլ իրավասու մարմինները հայտնաբերում են սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցումը բացառող խախտումներ,

6. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

6.1. Սույն Պայմանագրով սահմանված ծանուցումները կատարվում են գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, էլեկտրոնային նամակագրությունների միջոցով կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

6.2. Պայմանագիրը լուծելու մասին ծանուցումները պետք է կատարվեն ինչպես էլեկտրոնային նամակագրություն ուղարկելու միջոցով, այնպես էլ առձեռն հանձնելու կամ փոստային առաքմամբ հանձնելու միջոցով: Սույն դեպքում ծանուցվող Կողմը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումից

հետո 5 (հինգ) աշխատանքային օր անց, եթե այլ ժամկետ չի նշվի հետադարձ ծանուցման թերթիկում կամ ծանուցվող Կողմը չի սկսել էլեկտրոնային նամակագրությունը:

6.3. Սույն Պայմանագրով սահմանված ժամկետները սկսում են հոսել ծանուցված Կողմի կողմից ծանուցումը ստանալու օրվանից: Էլեկտրոնային նամակագրության դեպքում ծանուցման օր է համարվում ծանուցումը ուղարկելուց հետո հաջորդ աշխատանքային օրը, փոստային կապի դեպքում՝ հետադարձ ծանուցման մեջ նշված օրը, առձեռն հանձնելու դեպքում՝ հանձնման օրը, այլ ձևով ծանուցում ուղարկելու դեպքում ծանուցման ուղարկման հինգերորդ աշխատանքային օրը, եթե այլ բան սահմանված չէ սույն Պայմանագրով:

6.4. Սույն Պայմանագրի գործողության ընթացքում ծանուցումների հասցեների/տվյալների (ներառյալ Կողմերի անվանումների) փոփոխության, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում նշված հասցեներով անհասանելի լինելու դեպքում Կողմը պարտավոր է ծանուցել մյուս Կողմին այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ հակառակ դեպքում նախկինում ուղարկված ծանուցումները կհամարվեն պատշաճ ուղարկված անկախ դրանք ստացված լինելու հանգամանքից:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.2. Ծառայությունները մատուցելիս Ծառայություններից օգտվող անձանց կամ նրանց կողմից վնաս պատճառելու և այն փոխհատուցելու հետ կապված հարաբերությունները դուրս են սույն Պայմանագրի շրջանակից:

7.3. Կողմերը սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում միայն իրական վնասի չափով:

7.4. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

8.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

8.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 10 (տաս) օրից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

9. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

9.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի

է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

9.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

10.2. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

10.3. Կողմի՝ սույն Պայմանագրով սահմանված իրավունքին համապատասխանում է մյուս Կողմի պարտավորությունը ապահովել տվյալ իրավունքի իրացումը:

10.4. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

10.5. Այն դեպքում, երբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության արդյունքում արձանագրվում է, որ գործընթացում, մինչև պայմանագրի ստորագրումը, Կողմերը ներկայացրել են կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո մյուս կողմն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի ստորագրումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանային Պայմանագիրը չստորագրելու համար: Ընդ որում, սույն կետի իմաստով խախտում թույլ չտված կողմը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով խախտում թույլ տված կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Ընկերության կրած իրական վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

10.6. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

10.7. Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի ստորագրած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

10.8. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

10.9. Պայմանագրի հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասերը:

10.10. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով: Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից:

10.11. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

10.12. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

10.13. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերություն

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2050022082671001

Հովհաննես Մովսիսյան

Գործադիր տնօրեն

Կատարող

«Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 27, բն. 25

ՀՎՀՀ՝ 01557735

«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2470063177280150

Դավիթ Երեմյան

Գլխավոր տնօրեն

Հավելված N 1
«11» նոյեմբերի 2022թ կնքված
ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/72-Պ ծածկագրով պայմանագրի

Ծառայությունների բնութագիր

Անվանում	Տեխնիկական բնութագիր
Հանրային սննդի մատուցման ծառայություն	Ծառայությունը մատուցվում է Համալիրի տարածքում, որը տրամադրված է Կատարողի բացառիկ օգտագործմանը: Տարածքն ապահովված է սննդի մատուցման ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքով (ջուր, կոյուղի, էլեկտրական հոսանք): Տարածքում առկա է օդափոխության համակարգ և օդորակիչ: Կատարողը ապահովում է տարածքի օդափոխության պատշաճ կազմակերպումը, կոմունալ համակարգերի շահագործումը, սպասարկումը, նորոգումը և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ սարքերի տեղադրումը: Կատարողի կողմից տրամադրվող սնունդն ու ըմպելիքները պետք է պատրաստված լինեն բացառապես թարմ մթերքներից: Տաք/սառը ուտեստները պետք է պատրաստված լինեն թարմ և սերտիֆիկացված մսամթերքից, բուսական յուղից, ինչպես նաև թարմ բանջարեղենից (ըստ առկայության): Օգտագործվող մթերքը պետք է համապատասխանի ՀՀ-ում ընդունված չափանիշներին (ԳՈՍՏ 32606-2013, ԳՈՍՏ 32796-2014, ԳՈՍՏ 31962-2013, ԳՈՍՏ 1129-2013, ԳՈՍՏ 32261-2013, ԳՈՍՏ 54340-2011 և այլ): Յուրաքանչյուր օր պետք է մատուցվի նույն օրը պատրաստված սնունդ: Ճաշատեսակների և սննդամթերքների մատուցումը պետք է համապատասխանեն տվյալ սննդամթերքի կամ ճաշատեսակի համար ՍԱՏՄ կողմից սահմանված՝ օգտագործման համար պիտանելիության (երաշխիքային) ժամկետներին և որակական հատկանիշներին: Կատարողը իր հաշվին պետք է ապահովի անձեռոցիկների, կերակրի աղի և պղպեղի, առկայությունը ճաշարանում: Սննդի ապահովումն իրականացվում եմ յուրաքանչյուր օր, օրական երկու անգամ ժամը 13:00-ին և 18:00-ին: Անհրաժեշտությունից ելնելով նախապես Ընկերության նախազգուշացմամբ Ծառայություններ կարող են մատուցվել նաև այլ ժամերի՝ ըստ Ընկերության կողմից տրամադրված ժամանակացույցի:
Սննդի ապահովման ծառայություններից օգտվող անձանց նախնական ցանկ	Լեհաստանի հանրապետությունից ժամանած աշխատանքային խումբ՝ առավելագույնը 80 անձ
	Բելառուսի հանրապետությունից ժամանած աշխատանքային խումբ՝ առավելագույնը 80 անձ
	Բուլղարիայի հանրապետությունից ժամանած աշխատանքային խումբ՝ առավելագույնը 40 անձ
	Գերմանիայի հանրապետությունից ժամանած աշխատանքային խումբ՝ առավելագույնը 20 անձ
	Պորտուգալիայի հանրապետությունից ժամանած աշխատանքային խումբ՝ առավելագույնը 10 անձ

	Տեխնիկական անձնակազմ՝ առավելագույնը 40 անձ
	Միջոցառման շրջանակներում ներգրավված կամավորական խումբ՝ առավելագույնը 200 անձ
	Միջոցառման շրջանակներում ներգրավված պարային խմբեր՝ առավելագույնը 50 անձ
	Պատվիրակություններում ընդգրկված անձնակազմ, և վերջիններիս դիմահարդարումն ու վարսահարդարումն ապահովող անձնակազմ՝ առավելագույնը 400 անձ
	Միջոցառման շրջանակներում ներգրավված այլ անձնակազմ՝ առավելագույնը 200 անձ

Ընկերություն

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2050022082671001

Հովհաննես Մովսիսյան

Գործադիր տնօրեն

Կատարող

«Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 27, բն. 25

ՀՎՀՀ՝ 01557735

«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2470063177280150

Պավիթ Երեմյան

Գլխավոր տնօրեն

Հավելված N 2
«11» նոյեմբերի 2022թ կնքված
ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/72-Պ ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ №1

ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ (Լանչ-բոքսեր)

Օր 1	Օր 2	Օր 3
Լանչ բոքս 1	Լանչ բոքս 1	Լանչ բոքս 1
Մարինադ սնկով աղցան	Ամառային աղցան	Քամած մածուն վարունգով
Հավի ազդր ջեռոց	Նրբերշիկ 3 հատ	Հավի թևիկ / 2 հատ
Ֆրի	Բրինձ	Գյուղական կարտոֆիլ
Հաց 2 կտոր / լավաշ 1 կտոր	Հաց 2 կտոր / լավաշ 1 կտոր	Հաց 2 կտոր / լավաշ 1 կտոր
Կետչուպ	Կետչուպ	Կետչուպ
ՄՕԳ Բոքս / ՄՕԳ սոուսի տարա / ՄՕԳ պատառաքաղ/դանակ	ՄՕԳ Բոքս / ՄՕԳ սոուսի տարա / ՄՕԳ պատառաքաղ/դանակ	ՄՕԳ Բոքս / ՄՕԳ սոուսի տարա / ՄՕԳ պատառաքաղ/դանակ
Լանչ բոքս 2	Լանչ բոքս 2	Լանչ բոքս 2
Բազուկով աղցան	Կաղամբող աղցան	Թաբուլե
Կաղամբով տոլմա 5 հատ	Իշլի քյուֆթա /2 հատ	Նրբաբլիթ մսով / 2 հատ
Հնդկաձավար	Սպագետի	Պենե մակարոն
Հաց 2 կտոր / լավաշ 1 կտոր	Հաց 2 կտոր / լավաշ 1 կտոր	Հաց 2 կտոր / լավաշ 1 կտոր
Կետչուպ	Կետչուպ	Կետչուպ
ՄՕԳ Բոքս / ՄՕԳ սոուսի տարա / ՄՕԳ պատառաքաղ/դանակ	ՄՕԳ Բոքս / ՄՕԳ սոուսի տարա / ՄՕԳ պատառաքաղ/դանակ	ՄՕԳ Բոքս / ՄՕԳ սոուսի տարա / ՄՕԳ պատառաքաղ/դանակ

Կողմերն արձանագրում են, որ սույն Ցանկով նախատեսված Ճաշատեսակները տրամադրվում են մեկանգամյա օգտագործման համար նախատեսված լանչ-բոքսերով, որոնց արժեքը ներառված է Պայմանագրով սահմանված արժեքի մեջ:

ՑԱՆԿ №2
ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ

Օր 1	Օր 2	Օր 3
Անվանում	Անվանում	Անվանում
Հաց 2կտոր, լավաշ -1կտոր	Հաց 2կտոր, լավաշ -1կտոր	Հաց 2կտոր, լավաշ -1կտոր
Աղցան	Աղցան	Աղցան
Մարինադ սնկով աղցան	Ամառային աղցան	Քամած մածուն վարունգով
Բազուկով աղցան	Կաղամբով աղցան	Թաբուլե
Ապուր	Ապուր	Ապուր
Դդումով կրեմ ապուր	Բոռկկոլիով կրեմ ապուր	Լոլիկով կրեմ ապուր
Բորշչ / առանց միս	Ոսպով ապուր	Սնկով ապուր
Տաք ուտեստ	Տաք ուտեստ	Տաք ուտեստ
Հավի ազդր ջեռոցում	Նրբերշիկ	Հավի թևիկ
Կաղամբով տոլմա	Իշլի քյուֆթա	Նրբաբլիթ մսով
Խավարտ	Խավարտ	Խավարտ
Հնդկաձավար	Բրինձ	Գյուղական կարտոֆիլ
Կարտոֆիլ ֆրի	Սպագետի	Պենե մակարոն
Սոուս	Սոուս	Սոուս
Կետչուպ	Կետչուպ	Կետչուպ
Աղանդեր	Աղանդեր	Աղանդեր
Քուքի	Մաֆին	Պրոֆիտրոլ
ՄՕԳ ափսե, ապուրի ման, դանակ, պատառաքաղ, սոուսի տարա	ՄՕԳ ափսե, ապուրի ման, դանակ, պատառաքաղ, սոուսի տարա	ՄՕԳ ափսե, ապուրի ման, դանակ, պատառաքաղ, սոուսի տարա

ՑԱՆԿ №3

Անվանում
Լուծվող սուրճ
Թեյ Գրինֆիլդ
Կիտրոն
Իմբիր
Մեղր

Ընկերություն

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2050022082671001

Հովհաննես Մովսիսյան

Գործադիր տնօրեն

Կատարող

«Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 27, բն. 25

ՀՎՀՀ՝ 01557735

«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2470063177280150

Դավիթ Երեմյան

Գլխավոր տնօրեն